Արձանագրություն թիվ 8

ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ

12 ապրիլի 2019թ. ք.Իջևան

Նախագահ՝ Ա.Շ.Մարգարյան

Քարտուղար՝ Ք.Հ.Մխիթարյան

Նիստին մասնակցում էին խորհրդի 15 անդամները: Հրավիրվել էին նաև ամբիոնների դասախոսներ:

Օրակարգ

1. 2018-19 ուստարվա երկրորդ կիսամյակի առաջին ընթացիկ ստուգումների և քննությունների արդյունքների ամփոփում:
   /զեկ.Ա.Շ.Մարգարյան/
2. 2018-19 ուստարվա երկրորդ կիսամյակի երկրորդ ընթացիկ ստուգումների և քննությունների ժամանակացույցի հաստատում:
   /զեկ.Ա.Շ.Մարգարյան/
3. Ուսումնական և արտադրական պրակտիկաների անցկացման ծրագրերի քննարկում և հաստատում:

   /զեկ.Ք.Մխիթարյան, Դ.Չիբուխչյան/
4. Ավարտական և կուրսային աշխատանքների ընթացիկ վիճակի քննարկում:

ԼՍԵՑԻՆ - Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց դեկանի ժ/պ, խորհրդի նախագահ Ա.Շ.Մարգարյանը:

Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

Նիստը վարում էր Ա.Շ.Մարգարյանը:

Օրակարգի առաջին հարցի մասին հանդես եկավ խորհրդի նախագահ Ա.Շ.Մարգարյանը:Նա ներկայացրեց 2018-19թթ. ուստարվա երկրորդ կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների արդյունքները ըստ կուրսերի և

առարկաների /ամփոփ տվյալները կցվում են արձանագրության տեքստին/: Զեկուցողը հիմնականում անդրադարձավ այն առարկաներին, որոնց միջին առաջադիմությունը ցածր է տվյալ կուրսի կամ ֆակուլտետային միջին ցուցանիշից, ինչպես նաև նրանց, որոնց միջին առաջադիմությունը շատ բարձր է վերջիններից: Ա.Շ.Մարգարյանը հանձնարարեց, ամբիոններին պարզելու նրանց պատճառները և երկրորդ ընթացիկ քննությունների ու ստուգումների ժամանակ բացառել թերացումները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- ,,Գծանկարի, գունանկարի և քանդակի" ամբիոնի վարիչ Հ.Մ.Ասատրյանը: Նա համակարծիք էր զեկուցողի հետ և միաժամանակ նշեց, որ վերոհիշյալ ամբիոնի դասավանդողների մասնակցությամբ կազմակերպվում են լրացուցիչ պարապմունքներ՝առաջադիմության միջին ցուցանիշը բարձրացնելու համար:

ՈՐՈՇԵՑԻՆ - 1. Հանձնարարել ամբիոնների վարիչներին հատուկ ուշադրություն դարձնել տեսական և գործնական նյութի դասավանդման ձևերին ու մեթոդներին, երկրորդ ընթացիկ քննություններին և ստուգումներին՝ բարձր արդյունք ապահովելու համար:

2. Հանձնարարել ամբիոնների պրոֆեսորադասախոսական անձնակազմին ներկայացնել առաջարկներ երկրորդ ընթացիկ քննությունների անցկացման ձևի (գրավոր, բանավոր , դիտում քննությոիններ, ցուցադրություններ և այլն) վերաբերյալ:

Օրակարգի երկրորդ հարցի մասին հանդես եկավ ֆակուլտետի դեկան Ա.Շ.Մարգարյանը:Նա մասնակիցներին ներկայացրեց երկրորդ ընթացիկ քննությունների և ստուգումների ժամանակացույցը և նշեց, որ այն քննարկվել են բոլոր կուրսերի ուսանողների հետ, որտեղ հաշվի է առնվել նրանց կարծիքը ևս:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Հ.Ասատրյանը, Դ.Չիբուխչյանը: Նրանք համակարծիք էին ներկայացված տեղեկատվության հետ և առաջարկեցին հաստատել այն:

ՈՐՈՇԵՑԻՆ - Երկրորդ ընթացիկ քննությունների և ստուգումների ժամանակացույցը ներկայացնել ուսումնամեթոդական վարչություն՝ հաստատելու այն:

Օրակարգի երրորդ հարցի վերաբերյալ հանդես եկան ուսումնական և արտադրական պրակտիկաների ղեկավարներից Ք.Մխիթարայանը, Դ.Չիբուխչյանը, որոնք ներկայացրեցին իրենց կողմից կազմված ծրագրերի բովանդակությունը, անցկացման ձևերն ու մեթոդները: Նրանք մասնավորապես նշեցին, որ պրակտիկայի որոշ ժամանակահատված անհրաժեշտ է անցկացնել մասնաճյուղում. առաջին օրը՝

պայմանավորվածություններ ձեռք բերելու պրակտիկայի ընթացքում իրականացվելիք աշխատանքների վերաբերյալ, իսկ վերջին երկու օրվա ընթացքում՝ ամփոփելու այն:

ՈՐՈՇԵՑԻՆ- Պրակտիկայի կազմակերպման ծրագրերը հաստատել և ներկայացնել ուսումնամեթոդական վարչություն:

Օրակարգի չորրորդ հարցի վերաբերյալ հանդես եկավ դեկան Ա.Շ. Մարգարյանը և նշեց , որ պարբերաբար հարցումներ են անցկացվում ավարտական և կուրսային աշխատանքների ղեկավարների հետ, տեղյակ են վիճակի մասին , ավելին բոլոր ուսանողների արդեն տրամադրվել են անհրաժեշտ նյութեր , իսկ ներկա օրերին ուսանողները աշխատում են նաև տեսական հատվածի և էլեկտրոնային ցուցադրությունների պատրաստման վրա:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Լ.Ֆլջյանը, Հ.Ասատրյանը և նշեցին , որ փետրվարի 13 և 15-ին անցենկացրել նախապաշտպանություն և վերջնական հաստատել ավարտական աշխատանքների թեմաներն ու էսքիզները: Մինչև ապրիլի տասը որոշ ուսանողներ իրականացրել են իրենց աշխատանքների որոշ մասը: Այժմ հաջողությամբ շարունակվում են աշխատանքները և պարբերաբար խորհրդակցում են իրենց ղեկավարների հետ:

ՈՐՈՇԵՑԻՆ- 1.Ավարտական աշխատանքների թեզերը ներկայացնել ամբիոն մինչև մայիսի տասը՝ գրախոսներին տրամադրելու համար:

2.Ավարտական աշխատանքների մակետները ավարտել մինչև մայիսի տասնհինգը և ներկայացնել մասնաճյուղ:

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա.Շ.Մարգարյան

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ք.Հ.Մխիթարյան